





7. (1,0) 160գ ծովի ջրում պարունակվում է 8 գ աղ: Քանի՞ գրամ ծովի ջուրն է պարունակում 56գ աղ:

8. (2,0) Գյուղից քաղաք հեռավորությունը մարդատար ավտոմեքենան անցել է 3 ժամում, իսկ բեռնատարը՝ 5 ժամում: Գտնել յուրաքանչյուրի արագությունը և գյուղից քաղաք հեռավորությունը, եթե բեռնատարի արագությունը 30կմ/ժ-ով փոքր է մարդատարի արագությունից:

9. (4,0) Չորս ընկեր անտառում սունկ էին հավաքում: Նրանցից առաջինը հավաքեց բոլոր հավաքած սնկերի 0,5 մասը, երկրորդը՝ մնացածի 0,5 մասը, երրորդը՝ երկրորդի քաղածի  $\frac{1}{3}$  մասը, չորրորդը հավաքեց 16 սունկ: Ընկերները միասին քանի՞ սունկ հավաքեցին: